# ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԳԻՐԸ ԼՈՆԴՈՆԻ ԳԵՈՐԳ ԹԱՀԹԱՅԱՆ ԿԻՐԱԿՆՈՐՅԱ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՅ ԱՌ ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱՅԵԱՆ ԿԻՐԱԿՆՈՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ, ՈՐ Ի ԼՈՆԴՈՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

Լուսոյ Խորան Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքներն ենք բերում Լոնդոնի Գէորգ Թահթայեան Ազգային Վարժարանի տնօրէնութեանը, ուսուցչական կազմին, ժրաջան սաներին, հոգաբարձու անդամներին ու բոլոր բարերարներին՝ վարժարանի հիմնադրման քսանմէկամեայ յոբելեանի առիթով:

Սիրելիներ. մուտք ենք գործում քսանմէկերորդ դար՝ համայն մեր ժողովրդով աշխարհացրի արեւելքից արեւմուտք, հիւսիսից հարաւ, ապրելով օտարախօս միջավայրերում, ուր օրաւուր աճում է նիւթական աշխարհի արժեւորումն ու գնահատումը ի փոխան հոգեւորի:

Լեզու, հաւատ, մշակոյթ. սրանք են շաղկապում հայրենեաց եզերքներից հեռու, տարբեր ժողովուրդների յարակցութեամբ ապրող մերազնեայ զաւակաց, հնարաւորութիւն ընձեռում ազգային ինքնութիւն պահպանել, սերունդ մեծացնել՝ հաւատարիմ իր արմատներին եւ տէր՝ իր ժառանգութեանը:

Մեծազնիւ տնօրէնուհի Գէորգ Թահթայեան Վարժարանի, սիրելի ուսուցիչներ, հոգաբարձու եւ բարերար հայորդիք. տեղեակ ենք Ձեր աւանդաշատ վարժարանի գործունէութեանը: Ձեր ծառայութեամբ Դուք արժանի էք օրհնութեան եւ գնահատանքի, որ Հայրենիքից հեռաւոր ափերում նախանձախնդիր էք մեր ժողովրդի զաւակաց հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը: Մատաղ հոգիներում Ձեր սերմանած բարի հունդերը պտղաբերելու են ի շահ համօրէն մեր ազգի ու Եկեղեցու:

Սիրասուն սաներ Ազգային Վարժարանի. Դուք ծլարձակող ոստերն էք հինաւուրց մեր ազգի: Հպարտ եղէք ազնուատունկ Ձեր արմատներով, Առաքելական մեր Մայր Եկեղեցիով, ազատ ու անկախ Ձեր Հայրենիքով:

Հայրական մեր պատգամն ու յորդորն է Ձեզ ամենքիդ, սիրելիք Մեր, որ Դուք շարունակէք նոյն եռանդով, հայրենապաշտ նոյն ոգով ու եկեղեցանուէր Ձեր գործերով օրաւուր զօրացնել ու ծաղկեցնել Լոնդոնի Գէորգ Թահթայեան Կիրակնօրեայ Վարժարանը՝ ի պայծառութիւն Անգլիայի Հայոց Տիրախնամ թեմի եւ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Թող Բարձրեալն Աստուած Իր օրհնութեան ներքոյ հաստատուն եւ շէն պահի Լոնդոնի Գէորգ Թահթայեան Կիրակնօրեայ Վարժարանը եւ յարաճուն յաջողութիւններ պարգեւի նրա նուիրեալ բոլոր սպասաւորների եւ սաների ջանքերին ու ծրագրերին:

«Ողջ լերուք ի Տէր՝ զօրացեալք շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալք ի Մէնջ. ամէն»:

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Գիրս Օրհնութեան
ի 22-ն ապրիլի
ի թուին Տեառն 2000
եւ ի թուին հայոց ՌՆԽԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
Ընդ համարաւ 30